



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24 նոյեմբերի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/3

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 41 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, բնապահպանության, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Նախքան օրակարգին անդրադառնալը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Արսեն Կարապետյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավարի 18.11.2020թ. գրության՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյանը դիմում է ներկայացրել խմբակցության կազմից դուրս գալու մասին: Իզաբելլա Աբգարյանը շարունակում է ավագանու անդամի իր լիազորությունները և համապատասխան հանձնաժողովում աշխատանքները:

Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը տեղեկացրեց, որ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությունը հրաժարվում է Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնից, որի վերաբերյալ գրավոր կտեղեկացվի:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» հ.1-Ն որոշման հավելվածի 114-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանն առաջարկեց օրակարգի նախագծի 10-րդ և 11-րդ հարցերը՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» ավագանու որոշումների նախագծերը քննարկել որպես 2020 թվականի նոյեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծի 2-րդ և 3-րդ հարցեր: Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

4. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
8. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
9. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
10. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
11. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու **5**-րդ նստաշրջանի **3**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **37** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **37**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվեց միաձայն

**2. ԼՍԵՑԻՆ**- Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**– Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի մասին» **N186**-Ն որոշման **NN 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն **NN 1-4** հավելվածների:

**2.** Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել **100,000.0** հազար դրամ՝ Արցախի Հանրապետության մայրաքաղաք՝ Ստեփանակերտին, կապիտալ բնույթի աշխատանքների իրականացման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **41** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **41**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**3. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N186**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի մասին» **N186**-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի.

**1)** Եկամուտների գումարը ավելացնել **119,686.2** հազար դրամով,

**2)** Ծախսերի գումարը ավելացնել **119,686.2** հազար դրամով,

**2.** Որոշման **NN 1, 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն **NN 1-5** հավելվածների:

**3.** Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել **119,686.2** հազար դրամ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող նորակառույց բազմաբնակարան շենքերից՝ բնակիչներին նվիրաբերված բնակարանների եկամտային հարկի պարտավորությունների մարման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ հարկեր» հոդվածով:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **39** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **37**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**4. ԼՍԵՑԻՆ** - Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

**2.** Հաստատել սույն որոշման **1**-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

**3.** Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի **15**-րդ հոդվածի **6**-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի **20**-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել

առողիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 40 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**5. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N178-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետով.

«4.1. 2020 թվականի ընթացքում համայնքային սեփականություն հանդիսացող ծառերի էտումից և չորացած ծառերի հեռացումից առաջացած փայտանյութը որպես ձմեռային վառելիքայտ Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող է անվճար հատկացվել սոցիալապես անապահով ընտանիքների: Անվճար ձմեռային վառելիքայտ ստացող սոցիալապես անապահով ընտանիքների ցանկը, սոցիալապես անապահով ընտանիքների ընտրության չափորոշիչները, հատկացվելիք փայտանյութի չափաքանակը և հատկացման կարգը սահմանվում է Երևանի քաղաքապետի որոշմամբ:»:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 40 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**6. ԼՄԵՑԻՆ**- Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ**– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լևոն Ջաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Մարգարյանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարկոս Հարությունյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Մեծարենցի փողոցի հ.27/6 հասցեում գտնվող Էդոն Գիգոյանին սեփականության իրավունքով պատկանող **0.024212** հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **32**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**7. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **2** անդամ.

1. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

2. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարկոս Հարությունյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարկոս Հարությունյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մ. Հարությունյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի հ.29/13 հասցեում գտնվող **6985.0**քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **39** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **33**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **5**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**8. ԼՄԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

**1.** Լևոն Չաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարկոս Հարությունյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

**1.** Հասմիկ Խաչունց-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի Մալխասյանց փողոցի հ.6/1 և հ.12 հասցեներում գտնվող «Քիմմաքրում «Արաբկիր» ԲԲԸ-ին» սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար **0.024247**հա և **0.457**հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին սույն որոշման **1**-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **40** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **28**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **9**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**9. ԼՄԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Մարկոս Հարությունյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Համաձայնություն տալ՝ Մոնիկա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Չ. Մարկավազի փողոցի հ.72/3 հասցեում, տարածազնահատման 7-րդ գոտում գտնվող **573.1**քմ մակերեսով հողամասից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.05022020-01-0293 վկայական) ընդհանուր **335.07**քմ /**120.06**քմ+**215.01**քմ/ մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն հասցեին կից տարածքում և տարածազնահատման 7-րդ գոտում գտնվող ընդհանուր **335.07**քմ /**45.68**քմ+**289.39**քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **38** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **4**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**10. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2020** թվականի ծրագրի վերաբերյալ» **N178**-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր **24-49**-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **37** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **2**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**11. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Կոտոյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարկոս Հարությունյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի **N178**-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2020** թվականի ծրագրի վերաբերյալ» **N178**-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր **47.1** կետով.

«**47.1.** Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման դիմաց, որպես փոխհատուցում, պետության կողմից այդ քաղաքացիներին վարձակալության իրավունքով տրամադրված և այդ իրավունքները սահմանված կարգով գրանցված, չկառուցապատված հողամասերի, էթե այդ անձանց սեփականության օտարման դիմաց որևէ այլ փոխհատուցում չի տրամադրվել, ուղղակի վաճառքի գինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության **2003** թվականի դեկտեմբերի **24**-ի **N1746**-Ն որոշմամբ հաստատված կադաստրային արժեքով:»:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **37** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **36**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2020** թվականի դեկտեմբերի **22**-ին, ժամը **11.00**-ին:  
Առաջարկը ընդունվեց:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**